ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

ք.Երևան, Նալբանդյան 104 **«07» փետրվարի 2023թ.**

N8/ 1075

«Հետք» ինտերնետային թերթի և «Hetq.am» կայքի
լրագրող

Տիրայր Մուրադյանին

Ի պատասխան ՀՀ ԱԱԾ տնօրենին
հասցեագրված Ձեր՝ 30.01.2023թ.-ի հարցման.

Հայտնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնեական դիրքը ծառայողական շահերին հակառակ օգտագործելով, խմբային շահերից ելնելով, իրենց լիազորությունների շրջանակներում քաղաքապետարան դիմած մի շարք քաղաքացիների օգտին գործողություններ կատարելու համար «Երևան» հիմնադրամի հաշվեհամարին օրենքով սահմանված վճարումներից բացի լրացուցիչ գումարներ փոխանցելու դեպքի առթիվ 2018 թվականի հունիսի 12-ին ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Քրեական վարույթով պատշաճ, համակողմանի և անաչառ նախաքննությունն ապահովելու նպատակով շարունակվում են կատարվել քննչական և վարութային գործողություններ:

Քրեական վարույթով Տարոն Մարգարյանը մեղադրյալի կարգավիճակ չունի:

Հարցմամբ հայցվող մնացած տեղեկությունները չեն կարող տրամադրվել, քանի որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դրանք հանդիսանում են հրապարակման ոչ ենթակա նախաքննության տվյալներ:

Հարգանքով՝

Ավագ քննիչ **Վ.Բալյան**